ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2015 թվականի N 172 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ 728 հրամանագրի 1.5-րդ կետի ա/ ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունիսի 18-ի N 1328-Ա որոշման 2-րդ և 4-րդ կետերի, **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս բաժնեմաս ունեցող, պետությանը սեփականության իրավունքով պատկանող Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի Մ. Օհանջանյան N 92 հասցեում գտնվող՝ 20181.6 հազար ՀՀ դրամ արժեքով, 1788.4 քառ. մետր ընդհանուր մակերեսով, Սյունիքի մարզի <<Մեղրիի տարածաշրջանային բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կողմից չշահագործվող նախկին շենքն ու շինությունները և դրանց սպասարկման ու օգտագործման համար առանձնացված 0.844 հեկտար մակերեսով, 1053.2 դրամ կադաստրային արժեքով հողամասը անհատույց, սեփականության իրավունքով նվիրաբերել Հայաստանի Հանրապետության Մեղրի քաղաքային համայնքին՝ որպես բնակելի շենք վերակառուցելու և 2015 թվականի հունիսի 13-ին Մեղրիի քաղաքային համայնքի Զորավար Անդրանիկի փողոցի N 7 բնակելի շենքում բռնկված հրդեհի պատճառով տուժած ընտանիքներին և Մեղրիի քաղաքապետարանում հաշվառված ու բնակարանի

կարիք ունեցող երիտասարդ ընտանիքներին սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու պայմանով:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ. դեկտեմբերի 16

Ք. Կապան